ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 191- Ա **18 հունիսի 2015 թ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 61-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» N 61-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<4) փոխանցման ակտը՝ սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը, համաձայն հավելված 4-ի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ